գր ժ 23.09.2017թ
կոդ՝ 11817310

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«15» սեպտեմբերի 2017թ. № 468-Ն

## ՀՐԱՄԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 1045-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 986 որոշման կիրարկումն ապահովելու նպատակով՝

**_ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ_**

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի հունիսի 5-ի թիվ 444 հրամանը ուժը կորցրած ճանաչելու և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների գրանցման մատյանի», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտի», «Բնապահպանական և բնօգտագործման վճար վճարող իրավաբանական անձանց և նրանց կողմից վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունների», «Բնապահպանական և բնօգտագործման վճար վճարող իրավաբանական անձանց մասով առկա ապառքների վերաբերյալ տեղեկությունների» ձևերը, «Արտադրական թափոնների փաստացի ծավալների հաշվարկի» մեթոդիկան, «Ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման համար հաշվառման վերցնելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի» ցանկը և «Ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման համար հաշվառման վերցնելու մասին» տեղեկանքի ձևը հաստատելու մասին» թիվ 1045-Ն հրամանում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

Վ. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
սեպտեմբերի 15 -ի N 468-Ն հրամանի

| Հաստատված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի «15» «սեպտեմբերի» 2017 թվականի N 468-Ն հրամանով | Համաձայնեցված է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ «20» «09» 2017 թվական | Համաձայնեցված է Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ «20» «09» 2017 թվական | Համաձայնեցված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ «» «» 2017 թվական | Համաձայնեցված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ «28» «09» 2017 թվական |
|---|---|---|---|---|

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1045-Ն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Հավելված N1*
*Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի*
*2013 թվականի նոյեմբերի 27-ի*
*N1045-Ն հրամանի*

| **ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** | Փաստաթղթի հերթական համարը<br>____________________<br>*(լրացվում է հարկային մարմնի կողմից)* |
|---|---|

| **ԴԻՄԱՅԻՆ ՄԱՍ** | |
|---|---|
| **ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ** | [1] |

| | | |
|---|---|---|
| Վճարողը | [1.1] | |
| Վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը) | [1.2] | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | [1.3] | |
| Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը | [1.4] | |
| Հաշվետու (ճշտման) ժամանակաշրջանը | [1.5] | տարի / եռամսյակ |

| ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ | [2] |
|---|---|
| ՆՇՈՒՄ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐՈՂ ՉՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ | |

| ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ | | Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող մասի համար (դրամ) | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակների դեպքում (դրամ) | Ընդամենը հաշվարկված վճարը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | | [2.1] | [2.2] | [2.3] | [2.4] |
| Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար | [2.5] | | | | |
| Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար | [2.6] | | | | |
| Շրջակա միջավայր արտադրության և սպառման թափոնների տեղադրման համար | [2.7] | | | | |
| Մակերևութային ջրերի օգտագործման համար | [2.8] | | | | |
| Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար | [2.9] | | | | |
| Կենսապաշարների օգտագործման համար | [2.10] | | | | |
| Աղի արդյունահանված պաշարների համար | [2.11] | | | | |
| Հանքային ջրերի հանքավայրերից արդյունահանված հանքային ջրերի և ածխաթթու գազի պաշարների համար | [2.12] | | | | |
| Ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) մարված պաշարների համար | [2.13] | | | | |
| Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար | [2.14] | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | [2.15] | | | | | |
| Վճարների գծով արտոնություններ ______ | | | | | [2.16] | |
| Վճարման ենթակա բնապահպանական և բնօգտագործման վճարներ | | | | | [2.17] | |

**1.** Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվարկ-հաշվետվություն) լրացվում և ներկայացվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և $11^{1}$-ին հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N986 որոշմամբ հաստատված կարգով:

**2.** Հաշվարկ-հաշվետվությունում արժեքային ցուցանիշներն արտացոլվում են դրամներով (առանց լումաների), իսկ բնեղեն ծավալային ցուցանիշները՝ համապատասխան չափման միավորներով (ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ):

**3.** Հաշվարկ-հաշվետվությունը բաղկացած է դիմային մասից և հավելվածից:

**4.** Հաշվարկ-հաշվետվության (այդ թվում՝ ճշտված) բացառապես դիմային մասով նախատեսված վճար վճարող համարվելու դեպքում [2] բաժնում կատարվում է համապատասխան նշում:

5. Հաշվարկ-հաշվետվության դիմային մասի [1] բաժնում լրացվում են՝

[1.1] հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով).

[1.2] իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը.

[1.3] Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը.

[1.4] ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը).

[1.5] համապատասխան տարին և այն հաշվետու եռամսյակը, որի համար ներկայացվում է հաշվարկ-հաշվետվությունը կամ ճշտված հաշվարկ-հաշվետվությունը:

**5.** Հաշվարկ-հաշվետվության դիմային մասի [2] բաժնում արտացոլվում են դիմային մասին և (կամ) հավելվածին համապատասխան հաշվետու եռամսյակում բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկային ցուցանիշներն ըստ դրանց տեսակների՝

[2.5]-ից [2.13] տողերի [2.1]-ից [2.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են հավելվածի [5]-ից [13] բաժինների «Ընդամենը» տողերի սյունակներին համապատասխանող վանդակների համապատասխան հաշվարկային ցուցանիշները.

[2.14]-րդ տողի [2.4] սյունակին համապատասխանող վանդակում լրացվում է դիմային մասի [3] բաժնի [3.14] տողի հաշվարկային ցուցանիշը.

[2.15] տողի [2.1]-ից [2.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են [2.5]-ից [2.14] սյունակների տողերի համապատասխան ցուցանիշների հանրագումարները.

[2.16] տողին համապատասխանող վանդակում լրացվում է վճարների գծով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարողին վերապահված արտոնությունների ընդհանուր գումարը՝ հաշվարկված հաշվետու եռամսյակի համար ([2.16] տողում լրացնելով արտոնվող վճարատեսակների՝ [2.5]-ից [2.14] տողերից համապատասխան տողերի համարները և նշելով իրավական ակտի անվանումը, հոդվածը, կետը): Արտոնություններ նախատեսված չլինելու դեպքում [2.6] տողին համապատասխանող վանդակում լրացվում է «0».

[2.17] տողին համապատասխանող վանդակում լրացվում է հաշվետու եռամսյակի համար վճարման ենթակա վճարների ընդհանուր գումարը ([2.15] տողի [2.4] սյունակին և [2.16] տողին համապատասխանող վանդակների մեծությունների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու դեպքում [2.17] տողին համապատասխանող վանդակում լրացվում է «0»:

| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ | | | | | | | | | [3] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ապրանքի ծածկագիրն ըստ արտաքին տնտեսական | Ապրանքի համառոտ անվանումը | Իրացման շրջանառությունը | Բնապահպանական վճարի դրույքա- | Հաշվարկված բնապահպանական վճարի գումարը | Հաշվարկված բնապահպանական հարկի գումարից պակասեցվող գումարը | | | | Վճարման ենթակա բնապահպանական վճարի |
| | | | | | ԵՏՄ անդամ չհամարվող | ԵՏՄ անդամ համարվող | Ներմուծող իրացնողներից և | Հաշվանցվող | |

| գործունեության ապրանքային անվանացանկի |  |  | չափը (%) |  | պետություն-ներից ներմուծված ապրանքների մասով | պետություն-ներից ներմուծված ապրանքների մասով | (կամ) արտադրող հրացնողներից ձեռքբերված ապրանքների մասով | (պակասեց-վող) ընդհանուր գումարը | գումարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [3.1] | [3.2] | [3.3] | [3.4] | [3.5] | [3.6] | [3.7] | [3.8] | [3.9] | [3.10] |
| Արտադրող իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված և հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար (1-ին ենթաբաժին) | | | | | | | | | |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
| **Ընդամենը** |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  | [3.11] |  |
| Ներմուծող իրացնողների կողմից ԵԱՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծված և հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար (2-րդ ենթաբաժին) | | | | | | | | | |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
| **Ընդամենը** |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  | [3.12] |  |
| Ներմուծող իրացնողների կողմից ԵԱՄ անդամ համարվող պետություններից ներմուծված և հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար (3-րդ ենթաբաժին) | | | | | | | | | |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |  |  |
| **Ընդամենը** |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  | [3.13] |  |
| ***Ընդամենը շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար*** |  |  |  |  |  |  |  | [3.14] |  |

6. Հաշվարկ-հաշվետվության դիմային մասի [3] բաժնում (ըստ համապատասխան ենթաբաժինների) լրացվում է շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճարի հաշվարկը՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝

[3.1] սյունակում, պարտադիր առանձնացված ըստ համապատասխան ենթաբաժինների, լրացվում է արտադրողի իրացնողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում իրացված և (կամ) ներմուծող իրացնողի կողմից Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) անդամ չհամարվող պետություններից և (կամ) ԵՏՄ անդամ համարվող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից Հայաստանի Հանրապետությունում հաշվետու եռամսյակում իրացված իրացված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի աղյուսակում նշված շրջակա միջավայրին վնաս պատճառող յուրաքանչյուր ապրանքի ծածկագիրն ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի: Ներմուծող իրացնողների կողմից մինչև 2011 թվականի հոկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները չեն լրացվում.

[3.2] սյունակում լրացվում է [3.1] սյունակում նշված ծածկագրերին դասվող՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի աղյուսակում նշված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի համառոտ անվանումը.

[3.1] և [3.2] սյունակներում չեն լրացվում ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704 և 8705 ծածկագրերին դասվող ավտոմեքենաները.

[3.3] սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում արտադրող իրացնողի կողմից իրացված և (կամ) ներմուծող իրացնողի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից և (կամ) ԵՏՄ անդամ համարվող պետություններից ներմուծված և հաշվետու եռամսյակում իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող համապատասխան ապրանքի իրացման շրջանառությունը (առանց ավելացված արժեքի հարկի).

[3.4] սյունակում յուրաքանչյուր ապրանքի համար լրացվում է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի աղյուսակով Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող համապատասխան ապրանքի համար դրա իրացման շրջանառության նկատմամբ սահմանված համապատասխան դրույքաչափը.

[3.5] սյունակում լրացվում է յուրանչյուր ապրանքի համար հաշվարկված վճարը՝ [3.3] սյունակի համապատասխան տողի նկատմամբ [3.4] սյունակի համապատասխան տողի դրույքաչափով հաշվարկված գումարը.

**7.** Արտադրող իրացնողները յուրաքանչյուր ապրանքի մասով 1-ին ենթաբաժնում՝

[3.6] սյունակում լրացնում են իրացված ապրանքի արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից իրենց կողմից ներմուծված՝ շրջակա միջավայրի վնաս պատճառող ապրանքների ներմուծման համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարի գումարը.

[3.7] սյունակում լրացնում են իրացված ապրանքի արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ ԵՏՄ անդամ հանդիսացող պետություններից իրենց կողմից ներմուծված՝ շրջակա միջավայրի վնաս պատճառող ապրանքների ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարի գումարը.

[3.8] սյունակում լրացնում են իրացված ապրանքի արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ շրջակա միջավայրի վնաս պատճառող ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության մատակարարների (ներմուծող իրացնողների և արտադրող իրացնողների) հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական վճարի գումարը.

[3.9] սյունակում լրացնում են [3.6], [3.7] և [3.8] սյունակի համապատասխան տողերի հանրագումարը.

[3.10] սյունակում լրացնում են հաշվետու եռամսյակում հաշվարկված՝ վճարման ենթակա բնապահպանական վճարի գումարը ([3.5]-[3.9]), որը չպետք է գերազանցի իրացված ապրանքի համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարին (եթե ([3.5]-[3.9]) ≥ [3.5], ապա [3.10]=0).

[3.11] սյունակի «ընդամենը» տողում լրացնում են [3.10] սյունակի բոլոր տողերի հանրագումարը.

**8.** Ներմուծող իրացնողները, պարտադիր առանձնացված ըստ համապատասխան ենթաբաժինների, յուրաքանչյուր ապրանքի մասով՝

1) 2-րդ ենթաբաժնում [3.6] և [3.9] սյունակների համապատասխան տողերում ([3.6]=[3.9]) լրացնում են ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծված և իրացված՝ [3.1] սյունակում նշված ապրանքի ներմուծման համար մաքսային հայտարարագրում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարի գումարը՝ հաշվետու եռամսյակում իրացված ապրանքին համամասնորեն.

2) 3-րդ ենթաբաժնում [3.7] և [3.9] սյունակների համապատասխան տողերում ([3.7]=[3.9]) լրացնում են ԵՏՄ անդամ հանդիսացող պետություններից ներմուծված և իրացված՝ [3.1] սյունակում նշված ապրանքի ներմուծման հարկային հայտարարագրում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարի գումարը՝ հաշվետու եռամսյակում իրացված ապրանքին համամասնորեն.

3) 2-րդ և 3-րդ ենթաբաժինների համապատասխանաբար [3.10] սյունակում լրացնում են հաշվետու եռամսյակի համար յուրաքանչյուր ապրանքի համար հաշվարկված՝ վճարման ենթակա բնապահպանական վճարի գումարը ([3.5] -[3.9]), որը չպետք է գերազանցի իրացված ապրանքի համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարին (եթե ([3.5] -[3.9]) ≥ [3.5], ապա [3.10]=0.

[3.12] և [3.13] սյունակների համապատասխանաբար «ընդամենը» տողերում լրացնում են [3.10] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները.

**9.** [3.14] սյունակի «ընդամենը» տողում լրացվում է [3.11], [3.12] և [3.13] տողերի հանրագումարը:

Պաշտոնատար անձ
(ֆիզիկական անձ) ______________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

| ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ | [4] |
|---|---|

| | | |
|---|---|---|
| Վճարողը | [4.1] | |
| Վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը) | [4.2] | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | [4.3] | |
| Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը | [4.4] | |
| Հաշվետու ժամանակաշրջանը | [4.5] | տարի ... եռամսյակ |

**10.** Հաշվարկ-հաշվետվության հավելվածն էլեկտրոնային եղանակով ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**11.** Հաշվարկում արժեքային ցուցանիշներն արտացոլվում են դրամներով (առանց լումաների), իսկ բնեղեն ծավալային ցուցանիշները՝ համապատասխան չափման միավորներով (ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ):

**12.** Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [4] բաժնում լրացվում են՝

[4.1] հավելվածը ներկայացնող իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով).

[4.2] իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը.

[4.3] Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը.

[4.4] ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը).

[4.5] համապատասխան տարին և այն հաշվետու եռամսյակը, որի համար ներկայացվում է հաշվարկ-հաշվետվությունը կամ ճշտված հաշվարկ-հաշվետվությունը:

| ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | | | | | | [5] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում օդային ավազան արտանետված վնասակար նյութի անվանումը (օրենքով սահմանված դեպքում՝ նաև արտանետման աղբյուրի գտնվելու վայրը) | | Հաշվետու եռամսյակում արտանետված վնասակար նյութի համապատասխան փաստացի ամբողջ ծավալը (տոննա) | Փաստացի ծավալները չափաքանակներ սահմանված լինելու դեպքում (տոննա) | | | | | Փաստացի ծավալները գրոյական չափաքանակների դեպքում (տոննա) | | Բնապահպանական վճարի դրույքաչափերը | Հաշվարկված բնապահպանական վճարը | | | |
| | | | Չափաքանակները | Ժամանակավոր չափաքանակները | Փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում | Չափաքանակները մինչև 5 անգամ գերազանցող փաստացի ծավալները | Չափաքանակները 5 անգամից ավելի անգամ գերազանցող փաստացի ծավալները | Օրենքով սահմանված չափաքանակները չգերազանցող արտանետումների փաստացի ծավալները | Օրենքով սահմանված չափաքանակներին հավասար կամ դրանք գերազանցող արտանետումների փաստացի ծավալները | | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող ծավալների համար | Զրոյական չափաքանակների դեպքում | Ընդամենը |
| [5.1] | [5.1.1] | [5.2] | [5.3] | [5.4] | [5.5] | [5.6] | [5.7] | [5.8] | [5.9] | [5.10] | [5.11] | [5.12] | [5.13] | [5.14] |
| | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | [5.15] | | | | |

13. Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [5] բաժնում լրացվում են՝

[5.1] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում ամրակայված աղբյուրներից օդային ավազան փաստացի արտանետված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում նշված վնասակար նյութի համապատասխան անվանումը: Երևան քաղաքում և ազգային պարկերի տարածքներում գտնվող ամրակայված աղբյուրների դեպքում օդային ավազան փաստացի արտանետված վնասակար նյութի անվանումը լրացվում է առանձին տողով (անվանմանը կից [5.1.1] սյունակում նշելով ամրակայված աղբյուրի գտնվելու վայրը՝ «Երևան քաղաք» կամ «ազգային պարկ»).

[5.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում [5.1] սյունակում նշված վնասակար նյութերի արտանետման փաստացի ամբողջ ծավալները (տոննաներով).

[5.3] սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անշարժ աղբյուրներից մթնոլորտային աղտոտող նյութերի արտանետումների համար փաստացի արտանետումների կամ ՍԹԱ նախագծերի հիման վրա սահմանված արտանետումների ծավալները՝ հաշվարկված հաշվետու եռամսյակի համար (այս դեպքում [5.4] սյունակում լրացվում է «0»).

[5.4] սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների համար ժամանակավոր (մինչև հինգ տարի ժամկետով) չափաքանակներով (ժամանակավոր չափաքանակներ) սահմանված արտանետումների ծավալները՝ հաշվարկված հաշվետու եռամսյակի համար (այս դեպքում [5.3] սյունակում լրացվում է «0»).

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու թույլտվություն (չափաքանակ) չունենալու՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.3] և [5.4] սյունակներում լրացվում է «0».

[5.5] սյունակում լրացվում են [5.2] սյունակում նշված ծավալների՝ [5.3] կամ [5.4] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.5] սյունակում լրացվում է «0»,

[5.6] սյունակում լրացվում են [5.2] սյունակում նշված ծավալների՝ [5.3] սյունակի չափաքանակները մինչև 5 անգամ գերազանցող համապատասխան ծավալները (([5.2]-[5.3])/[5.3])≤5), իսկ [5.7] սյունակում՝ դրանք 5 անգամից ավելի անգամ գերազանցող համապատասխան ծավալները (([5.2]-[5.3])/[5.3])>5): Ժամանակավոր չափաքանակներ սահմանված լինելու դեպքում [5.4] սյունակի չափաքանակները գերազանցող ամբողջ ծավալները լրացվում են միայն [5.6] սյունակում (այս դեպքում [5.7] սյունակում լրացվում է «0»): Բացա-

ռապես չափաքանակների սահմաններում փաստացի արտանետումների, ինչպես նաև զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.6] և [5.7] սյունակներում լրացվում է «0»:

Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում արտանետված վնասակար նյութերի համապատասխան փաստացի ամբողջ՝ [5.2] սյունակում նշված ծավալները լրացվում են [5.8] սյունակում, եթե արտանետումների փաստացի ծավալները չեն գերազանցում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված՝ ըստ վճարի օբյեկտների համապատասխան չափաքանակները: Այդ չափաքանակներին հավասար կամ դրանք գերազանցող համապատասխան փաստացի արտանետումների ամբողջ ծավալները լրացվում են [5.9] սյունակում:

[5.10] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված և «բ» կետով նախատեսված կարգով հաշվարկված դրույքաչափերը, իսկ նույն մասի «գ» կետով նախատեսված դեպքերում դրույքաչափերն ավելացվում են 1.5 անգամ:

[5.11] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([5.5] սյունակի) համար հաշվարկված վճարի գումարները ([5.5]X[5.10]):

[5.12] սյունակում լրացվում են չափաքանակները (այդ թվում՝ ժամանակավոր չափաքանակները) գերազանցող փաստացի ծավալների ([5.6] և [5.7] սյունակների) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([5.10] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված վճարի գումարները (([5.6] X [5.10] X համապատասխան բազմապատիկ մեծություն) և ([5.7] X [5.10] X համապատասխան բազմապատիկ մեծություն) մեծությունների հանրագումարը)):

[5.13] սյունակում լրացվում են զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.8] կամ [5.9] սյունակների համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([5.10] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված վճարի գումարները՝ ([5.8] X [5.10] X համապատասխան բազմապատիկ մեծություն) կամ ([5.9] X [5.10] X համապասխան բազմապատիկ մեծություն):

[5.14] սյունակի տողերում լրացվում են [5.11], [5.12] և [5.13] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [5.15] «ընդամենը» տողերում՝ [5.11], [5.12], [5.13] և [5.14] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | | | [6] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում ջրային ավազան արտանետված վնասակար նյութերի և միացությունների անվանումները (օրենքով սահմանված դեպքում՝ նաև ջրային ավազանի կամ մարզի անվանումը) | | | Հաշվետու եռամսյակում արտանետումների համապատասխան փաստացի ամբողջ ծավալները (տոննա) | Չափաքանակները (տոննա) | Արտանետումների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (տոննա) | Չափաքանակները գերա-զանցող արտանետումների փաստացի ծավալները (տոննա) | Բնապահպանական վճարի դրույքաչափերը | Հաշվարկված բնապահպանական վճարը | | | |
| | | | | | | | | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող ծավալների համար | Զրոյական չափաքանակների դեպքում | Ընդամենը |
| [6.1] | [6.1.1] | [6.1.2] | [6.2] | [6.3] | [6.4] | [6.5] | [6.6] | [6.7] | [6.8] | [6.9] | [6.10] |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | [6.11] | | | | |

14. Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [6] բաժնում լրացվում են՝

[6.1] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում ջրային ավազան փաստացի արտանետված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերում նշված վնասակար նյութի և միացության համապատասխան անվանումը: Սևանա լճի ջրահավաք ավազան, Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան և Գետառ գետեր վնասակար նյութերի և միացությունների արտանետումներ իրականացնողները (բացառությամբ ջրամատակարարման և ջրահե-

ռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների) ջրային ավազան փաստացի արտանետված վնասակար նյութի և միացության անվանումը լրացնում են առանձին տողով (անվանմանը կից [6.1.1] սյունակում նշելով՝ «Սևանա լճի ջրահավաք ավազան», «Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան գետ» կամ «Հրազդանի կիրճի տարածքում Գետառ գետ»): Եթե արտանետումները կատարվում են Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում, ապա փաստացի արտանետված վնասակար նյութի և միացության անվանումը լրացնում են առանձին տողով (անվանմանը կից [6.1.2] սյունակում նշելով՝ «Արարատի մարզ» կամ «Արմավիրի մարզ»).

[6.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում [6.1] սյունակում նշված փաստացի արտանետված վնասակար նյութերի և միացությունների համապատասխան ամբողջ ծավալները (տոննաներով).

[6.3] սյունակում լրացվում են Հ Հայաստանի Հանրապետության Հ ջրային օրենսգրքին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի կամ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի ծավալները՝ հաշվարկված հաշվետու եռամսյակի համար: Ջրօգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալները կամ ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները կամ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մասին տվյալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [6.3] սյունակում լրացվում է «0».

[6.4] սյունակում լրացվում են [6.2] սյունակում ծավալների՝ [6.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [6.4] սյունակում լրացվում է «0».

[6.5] սյունակում լրացվում են [6.2] սյունակում ծավալների՝ [6.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([6.2] և [6.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [6.5] սյունակում լրացվում է «0».

[6.6] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված և «բ» կետին համապատասխան հաշվարկված դրույքաչափերը, իսկ նույն մասի «գ» կետով սահմանված դեպքերում (բացառությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների) դրույքաչափերը կրկնապատկվում են.

[6.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([6.4] սյունակի) համար հաշվարկված վճարի գումարները ([6.4] X [6.6]).

[6.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([6.5] սյունակի) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([6.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([6.5] X [6.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[6.9] սյունակում լրացվում են զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([6.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([6.2] սյունակի համապատասխան տող X [6.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[6.10] սյունակի տողերում լրացվում են [6.7], [6.8] և [6.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ **[6.11]** «ընդամենը» տողերում՝ [6.7], [6.8], [6.9] և [6.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | [7] |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում շրջակա միջավայրում տեղադրված թափոնների դասերն ըստ վտանգավորության աստիճանի և տեղադրման ժամանակահատվածների | Տեղադրված թափոնների փաստացի ամբողջ ծավալները (տոննա) | Տեղադրված թափոնների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (տոննա) | Տեղադրված թափոնների չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները (տոննա) | Բնապահպանական վճարի դրույքաչափերը | Հաշվարկված բնապահպանական վճարը | | |
| | | | | | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող ծավալների համար | Ընդամենը |
| **[7.1]** | **[7.2]** | **[7.3]** | **[7.4]** | **[7.5]** | **[7.6]** | **[7.7]** | **[7.8]** |
| **Հատուկ հատկացված տեղերում (բացառությամբ արդյունաբերական հրապարակների) թափոնների տեղադրման համար** | | | | | | | |
| Առաջին դասի | | | | | | | |
| Երկրորդ դասի | | | | | | | |
| Երրորդ դասի | | | | | | | |
| Չորրորդ դասի | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ լեռնաարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող և հողածածկույթի քանդման ու շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների) | | | | | | | |
| Լեռնաարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոններ | | | | | | | |
| Հողածածկույթի քանդման և շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների | | | | | | | |
| **Արդյունաբերական հրապարակներում թափոնների տեղադրման (պահման) համար** | | | | | | | |
| **Առաջին դասի** | | | | | | | |
| մինչև 1 տարի | | | | | | | |
| 1-ից երեք տարի ներառյալ | | | | | | | |
| երեք տարուց ավելի | | | | | | | |
| **Երկրորդ դասի** | | | | | | | |
| մինչև 1 տարի | | | | | | | |
| 1-ից երեք տարի ներառյալ | | | | | | | |
| երեք տարուց ավելի | | | | | | | |
| **Երրորդ դասի** | | | | | | | |
| մինչև 1 տարի | | | | | | | |
| 1-ից երեք տարի ներառյալ | | | | | | | |
| երեք տարուց ավելի | | | | | | | |
| **Չորրորդ դասի** | | | | | | | |
| մինչև 1 տարի | | | | | | | |
| 1-ից երեք տարի ներառյալ | | | | | | | |
| երեք տարուց ավելի | | | | | | | |
| **Ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ լեռնաարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող ոչ վտանգավոր թափոնների)** | | | | | | | |
| մինչև 1 տարի | | | | | | | |
| 1-ից երեք տարի ներառյալ | | | | | | | |
| երեք տարուց ավելի | | | | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **[7.9]** | | | | |

**15.** Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [7] բաժնում լրացվում են՝

[7.1] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրված փաստացի ամբողջ ծավալներն ըստ [7.1] սյու-[7.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրված փաստացի ամբողջ ծավալներն ըստ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դասերի (թափոնների տեսակները հա-մախմբելով ըստ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան վտանգավորության դասերի) և տեղադրման ժամանակահատվածների (թափոն-ների առաջացման պահից հաշվարկած մինչև մեկ տարի պահման դեպքում (տեխնոլոգիական փուլ, կուտակում) կամ թափոնների առաջացման պահից հաշվարկած մեկ տարուց մինչև երեք տարի ներառյալ պահման դեպքում կամ թափոնների առաջացման պահից հաշվարկած երեք տարուց ավելի պահման դեպքում).

[7.3] սյունակում լրացվում են թափոնների տեղադրման համար վտանգավորության տվյալ դասին (այդ թվում՝ տեղադրման ժամանակահատվածին) համապատասխանող թափոն-ների տեսակների համար «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաստատված թափոնների տեղադրման սահմանաքանակներով նախա-տեսված թույլատրելի քանակները չգերազանցող ծավալները: Թափոնների տեղադրման սահմանաքանակներ հաստատված չլինելու դեպքում [7.3] սյունակում լրացվում է «0»:

[7.4] սյունակում լրացվում են թափոնների տեղադրման համար վտանգավորության տվյալ դասին (այդ թվում՝ տեղադրման ժամանակահատվածին) համապատասխանող թափոն-ների տեսակների համար «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաստատված թափոնների տեղադրման սահմանաքանակներով նախա-

տեսված թույլատրելի քանակները գերազանցող ծավալները: Չափաքանակները գերազանցող ծավալների բացակայության դեպքում [7.4] սյունակում լրացվում է «0»: Թափոնների տեղադրման սահմանաքանակներ հաստատված չլինելու դեպքում [7.4] սյունակում լրացվում են [7.2] սյունակում նշված ամբողջ ծավալները.

[7.5] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «ա» և «բ» կետերով սահմանված համապատասխան դրույքաչափերը.

[7.6] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([7.3] սյունակի) համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([7.3] X [7.5]).

[7.7] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող (այդ թվում՝ թափոնների տեղադրման սահմանաքանակներ հաստատված չլինելու դեպքում) փաստացի ծավալների ([7.4] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([7.5] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([7.4] X [7.5] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[7.8] սյունակի տողերում լրացվում են [7.6] և [7.7] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [7.9] «ընդամենը» տողերում՝ [7.6], [7.7] և [7.8] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | [8] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Հաշվարկված բնօգտագործման վճարը | | | |
| Հաշվետու եռամսյակում մակերևութային ջրերի օգտագործման տեսակներն ըստ օգտագործման նպատակների (օրենքով սահմանված դեպքում՝ նաև մարզի անվանումը) | | Հաշվետու եռամսյակում ջրօգտագործման փաստացի ամբողջ ծավալները (մ³) | Չափաքանակները (մ³) | Ջրօգտագործման փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (մ³) | Չափաքանակները գերազանցող ջրօգտագործման փաստացի ծավալները (մ³) | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափով | Ջրրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով | Ընդամենը |
| [8.1] | [8.1.1] | [8.2] | [8.3] | [8.4] | [8.5] | [8.6] | [8.7] | [8.8] | [8.9] | [8.10] |
| Մակերևութային (բացառությամբ Սևանա լճի) ջրերի օգտագործման համար | | | | | | | | | | |
| 1. Ձկնաբուծության նպատակով | | | | | | | | | | |
| 2. Արդյունաբերական նպատակներով | | | | | | | | | | |
| 3.Խմելու-կենցաղային նպատակներով, բացառությամբ 4-րդ կետում նշված դեպքի | | | | | | | | | | |
| 4. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների համար | | | | | | | | | | |
| 5. Ոռոգման նպատակով | | | | | | | | | | |
| Սևանա լճից ջրօգտագործման համար | | | | | | | | | | |
| 1. Ոռոգման նպատակով | | | | | | | | | | |
| 2. Այլ նպատակներով | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | [8.11] | | | | | |

**16.** Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [8] բաժնում լրացվում են՝

Եթե ջրօգտագործումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում, ապա ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N864 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (այսուհետ՝ հավելվածում Դրույքաչափեր) I բաժնով սահմանված՝ [8.1] սյունակում նշված օգտագործման համապատասխան նպատակին կից [8.1.1] սյունակում նշվում է «Արարատի մարզ» կամ «Արմավիրի մարզ»).

[8.2] սյունակում լրացվում են ըստ Դրույքաչափերով սահմանված օգտագործման նպատակների՝ [8.1] սյունակում նշված ջրօգտագործման յուրաքանչյուր տեսակի մասով հաշվետու եռամսյակում օգտագործված մակերևութային ջրերի համապատասխան փաստացի ամբողջ ծավալները:

[8.3] սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված՝ ջրօգտագործման համապատասխան տեսակների համար ջրօգտագործման (մակերևութային ջրերի ջրառի) ծավալները՝ հաշվարկված եռամսյակի համար: Ջրօգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [8.3] սյունակում լրացվում է «0»:

[8.4] սյունակում լրացվում են [8.2] սյունակում նշված ծավալների՝ [8.3] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [8.4] սյունակում լրացվում է «0»:

[8.5] սյունակում լրացվում են [8.3] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([8.2] և [8.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [8.5] սյունակում լրացվում է «0»:

[8.6] սյունակում լրացվում են Դրույքաչափերի I բաժնով սահմանված բնօգտագործման վճարների համապատասխան դրույքաչափերը:

[8.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([8.4] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([8.4] X [8.6]):

[8.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([8.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([8.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([8.5] X [8.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն):

[8.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում ամբողջ փաստացի ծավալների ([8.2] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([8.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([8.2] X [8.6] X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ):

[8.10] սյունակի տողերում լրացվում են [8.7], [8.8] և [8.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, [8.11] «Ընդամենը» տողերում՝ [8.7], [8.8], [8.9] և [8.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ԵՎ ԹԵՐՄԱԼ ՋՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | [9] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման տեսակներն ըստ նպատակների (օրենքով սահմանված դեպքում՝ նաև մարզի անվանումը) | | Հաշվետու եռամ-սյակում արդյու-նահանված ջրերի փաստացի ամբողջ ծավալները (մ³) | Չափաքանակները (մ³) | Արդյունահան-ման փաստացի ծավալները չափաքանակ-ների սահմաններում (մ³) | Չափաքանակները գերազանցող արդյունա-հանման փաստացի ծավալները (մ³) | Բնօգտա-գործման վճարի դրույ-քաչափերը (դրամ) | Հաշվարկված բնօգտագործման վճարը | | | |
| | | | | | | | Չափաքա-նակների սահման-ներում | Չափաքանակ-ները գերազանցող ծավալների համար | Զրոյական չափաքանակների դեպքում | Ընդամենը |
| [9.1] | [9.1.1] | [9.2] | [9.3] | [9.4] | [9.5] | [9.6] | [9.7] | [9.8] | [9.9] | [9.10] |
| Խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրեր | | | | | | | | | | |
| 1. Ցանկացած նպատակներով, բացառությամբ 2-րդ կետում նշված դեպքի | | | | | | | | | | |
| 2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակեր-պությունների ու տեղական ինքնա-կառավարման մարմինների համար | | | | | | | | | | |
| Խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրեր | | | | | | | | | | |
| 1. Ոռոգման նպատակով | | | | | | | | | | |
| 2. Այլ նպատակներով | | | | | | | | | | |

| Ստորերկրյա թերմալ ջրեր | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ռեկրեացիոն (այդ թվում՝ հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | [9.11] | | | | |

**17.** Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [9] բաժնում լրացվում են՝

Եթե արդյունահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում, ապա ըստ Դրույքաչափերի I բաժնով սահմանված՝ [9.1] սյունակում նշված արդյունահանման համապատասխան նպատակին կից [9.1.1] սյունակում նշվում է «Արարատի մարզ» կամ «Արմավիրի մարզ»).

[9.2] ստորերկրյա խորքային (այդ թվում՝ ինքնաշատրվանող) հորատանցքը մեկ նպատակով շահագործելիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնական ջրաչափ տեղադրված լինելու դեպքում [9.2] սյունակում ըստ [9.1] սյունակում նշված նպատակի՝ լրացվում է հաշվետու եռամսյակում հիմնական ջրաչափով հաշվառված ջրի ծավալը: Հիմնական և (կամ) առանձնացված ջրաչափ տեղադրված չլինելու դեպքում [9.2] սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (ստորերկրյա (ստորգետնյա) քաղցրահամ ջրերի արդյունահանման) համապատասխան ծավալները՝ հաշվարկված եռամսյակի համար: Հորատանցքը մեկից ավելի նպատակով շահագործելիս տեղադրված հիմնական ջրաչափից հետո յուրաքանչյուր նպատակի համար առանձնացված ջրաչափ տեղադրված լինելու դեպքում [9.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում առանձնացված ջրաչափերով հաշվառված ջրի համապատասխան ծավալները.

[9.3] սյունակում լրացվում են ջրօգտագործման համար Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (ստորերկրյա (ստորգետնյա) քաղցրահամ ջրերի արդյունահանման) ծավալները՝ հաշվարկված եռամսյակի համար: Ջրօգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվություններում ստորերկրյա (ստորգետնյա) քաղցրահամ ջրերի արդյունահանման ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [9.3] սյունակում լրացվում է «0».

[9.4] սյունակում լրացվում են [9.2] սյունակում նշված ծավալների՝ [9.3] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [9.4] սյունակում լրացվում է «0».

[9.5] սյունակում լրացվում են [9.3] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([9.2] և [9.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [9.5] սյունակում լրացվում է «0».

[9.6] սյունակում լրացվում են Դրույքաչափերի I բաժնով սահմանված բնօգտագործման վճարների համապատասխան դրույքաչափերը.

[9.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([9.4] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([9.4] X [9.6]).

[9.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([9.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([9.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([9.5] X [9.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[9.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում ամբողջ փաստացի ծավալների ([10.2] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([9.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([9.2] X [9.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[9.10] սյունակի տողերում լրացվում են [9.7], [9.8] և [9.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [9.11] «Ընդամենը» տողերում՝ [9.7], [9.8], [9.9] և [9.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ԿԵՆՍԱՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | [10] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում օգտագործված կենսապաշարների տեսակները | Համապատասխան չափման միավորը | Հաշվետու եռամսյակում օգտագործված կենսապաշարների փաստացի համապատասխան ամբողջ ծավալները | Չափաքանակներն արտահայտված համապատասխան չափման միավորով | Օգտագործված կենսապաշարների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող՝ օգտագործված կենսապաշարների փաստացի ծավալները | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը | Հաշվարկված բնօգտագործման վճարը | | | |
| | | | | | | | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցելու համար | Զրոյական չափաքանակների դեպքում | Ընդամենը |

| [10.1] | [10.2] | [10.3] | [10.4] | [10.5] | [10.6] | [10.7] | [10.8] | [10.9] | [10.10] | [10.11] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | [10.12] | | | | | |

**18**. Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [10] բաժնում լրացվում են՝

[10.1] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում օգտագործված՝ Դրույքաչափերի III բաժնով սահմանված կենսապաշարների տեսակները,

[10.2] սյունակում լրացվում են կենսապաշարների համար սահմանված համապատասխան չափման միավորները (մ3, կգ, հատ, հեկտար, գլուխ և այլն),

[10.3] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում օգտագործված կենսապաշարների փաստացի համապատասխան ծավալները,

[10.4] սյունակում լրացվում են կենսապաշարների տեսակների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն սահմանված չափաքանակները: Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի համաձայն բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) համար անտառօգտագործման պայմանագրեր (այդ թվում՝ անտառահատման, անտառային տոմսեր, արմատի վրա բնափայտի մանր բացթողման օրդեր) չունենալու, ինչպես նաև օրենսդրության՝ համաձայն կենսապաշարների մնացած տեսակների օգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում՝ պայմանագրում օգտագործման ենթակա ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [10.4] սյունակում լրացվում է «0»:

[10.5] սյունակում լրացվում են [10.3] սյունակում նշված ծավալների՝ [10.4] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [10.5] սյունակում լրացվում է «0»:

[10.6] սյունակում լրացվում են [10.4] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([10.3] և [10.4] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [10.6] սյունակում լրացվում է «0»:

[10.7] սյունակում լրացվում են Դրույքաչափերի III բաժնով սահմանված բնօգտագործման վճարների համապատասխան դրույքաչափերը.

[10.8] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([10.5] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([10.5] X [10.7], իսկ Դրույքաչափերով սահմանված դեպքերում՝ X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[10.9] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([10.6] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Դրույքաչափերով սահմանված համապատասխան ([10.7] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([10.6] X [10.7] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[10.10] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում ամբողջ փաստացի ծավալների ([10.3] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Դրույքաչափերով սահմանված համապատասխան ([10.7] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([10.3] X [10.7] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[10.11] սյունակի տողերում լրացվում են [10.8], [10.9] և [10.10] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [10.12] «Ընդամենը» տողերում՝ [10.8], [10.9], [10.10] և [10.11] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ԱՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [11] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում աղի արդյունահանման տեսակները | Հաշվետու եռամսյակում արդյունահանված աղի փաստացի ամբողջ ծավալները (տոննա) | Չափաքանակները (տոննա) | Չափաքանակները չգերազանցող արդյունահանման փաստացի ծավալները (տոննա) | Չափաքանակները գերազանցող արդյունահանման փաստացի ծավալները (տոննա) | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը | Հաշվարկված բնօգտագործման վճարը | | | |
| | | | | | | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող ծավալների համար | Զրոյական չափաքանակների դեպքում | Ընդամենը |
| [11.1] | [11.2] | [11.3] | [11.4] | [11.5] | [11.6] | [11.7] | [11.8] | [11.9] | [11.10] |
| | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | **[11.11]** | | | | |

**19.** Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [11] բաժնում լրացվում են՝

[11.1] սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N864 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (այսուհետ՝ Դրույքաչափեր) II բաժնով աղի արդյունահանման փաստացի իրականացված տեսակները ըստ տրամադրված (համապատասխան) թույլատվությունների հաշվետու եռամսյակում.

[11.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում աղի արդյունահանված համապատասխան ամբողջ պաշարները (ըստ [11.1] սյունակում նշված արդյունահանման տեսակների.

[11.3] սյունակում լրացվում են չափաքանակները՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրերով նախատեսված աղի արդյունահանման ծավալները, հաշվարկված հաշվետու եռամսյակի համար: Ընդերքօգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում՝ պայմանագրում արդյունահանման ենթակա ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [11.3] սյունակում լրացվում է «0».

[11.4] սյունակում լրացվում են [11.2] սյունակում նշված ծավալների՝ [11.3] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [11.4] սյունակում լրացվում է «0».

[11.5] սյունակում լրացվում են [11.3] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([11.2] և [11.3.] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [11.5] սյունակում լրացվում է «0».

[11.6] սյունակում լրացվում են Դրույքաչափերի II բաժնով սահմանված համապատասխան դրույքաչափերը.

[11.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([11.4] սյունակի) համար հաշվարկված վճարի գումարները ([11.4] X [11.6]).

[11.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([11.5] սյունակի) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([11.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([11.5] X [11.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[11.9] սյունակում լրացվում են զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում արդյունահանված փաստացի ամբողջ ծավալների ([11.2] սյունակի) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([11.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([11.2] X [11.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[11.10] սյունակի տողերում լրացվում են [11.7], [11.8] և [11.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [11.11] «Ընդամենը» տողերում լրացվում են [11.7], [11.8], [11.9] և [11.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԵՎ ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [12] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում հանքային ջրի և ածխաթթու գազի արդյունահանման տեսակներն ըստ օգտագործման նպատակների | Հաշվետու եռամսյակում արդյունահանված հանքային ջրերի և ածխաթթու գազի փաստացի համապատասխան ամբողջ ծավալը՝ (մ3) | Չափաքանակները (մ³) | Արդյունահանված հանքային ջրերի և ածխաթթու գազի փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում՝ (մ3) | Արդյունահանված հանքային ջրերի և ածխաթթու գազի չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները՝ (մ³) | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը | Հաշվարկված բնօգտագործման վճարը | | | |
| | | | | | | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող ծավալների համար | Զրոյական չափաքանակների դեպքում | Ընդամենը |
| **[12.1]** | **[12.2]** | **[12.3]** | **[12.4]** | **[12.5]** | **[12.6]** | **[12.7]** | **[12.8]** | **[12.9]** | **[12.10]** |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | [12.11] | | | | |

**20**. Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [12] բաժնում լրացվում են՝

[12.1] սյունակում լրացվում են Դրույքաչափերի II բաժնով ըստ նպատակների սահմանված՝ հաշվետու եռամսյակում հանքային ջրի հորատանցքի (աղբյուրի) շահագործման փաստացի իրականացման տեսակները ըստ տրամադրված (համապատասխան) թույլատվությունների, հաշվի առնելով [12.2] սյունակի լրացման կարգը: Անկախ հորատանցքը (աղբյուրը) շահագործելու նպատակներից, այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղադրված (միացված) է (են) ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր), [12.1] սյունակում պարտադիր լրացվում է ածխաթթու գազ արտադրելու (ստանալու) նպատակը.

[12.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում արդյունահանված հանքային ջրի և արտադրված (ստացված) ածխաթթու գազի փաստացի ամբողջ ծավալները: Միայն մեկ նպատակով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առաջնային ջրահաշվիչ տեղադրված լինելու դեպքում [12.2] սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում առաջնային ջրահաշվիչով հաշվառված ջրի ամբողջ ծավալը, իսկ առաջնային ջրահաշվիչ տեղադրված չլինելու դեպքում՝ հաշվետու եռամսյակում հանքային ջրի հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված ջրի ամբողջ ծավալը: Միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր նպատակի համար առանձնացված ջրահաշվիչ տեղադրված լինելու դեպքում [12.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում առանձնացված ջրահաշվիչներով հաշվառված ջրի համապատասխան ծավալները ([12.1] սյունակում լրացնելով համապատասխան նպատակները), յուրաքանչյուր նպատակի համար առանձնացված ջրահաշվիչ տեղադրված չլինելու դեպքում [12.1] սյունակում լրացվում է տվյալ հորատանցքի (աղբյուրի) փաստացի շահագործման տեսակներից Դրույքաչափերի II բաժնով ամենաբարձր դրույքաչափին համապատասխանող նպատակը՝ [12.2] սյունակում լրացնելով հաշվետու եռամսյակում առաջնային ջրահաշվիչով հաշվառված ջրի ամբողջ ծավալը, իսկ առաջնային ջրահաշվիչի բացակայության դեպքում՝ հաշվետու եռամսյակում հանքային ջրի հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված ջրի ամբողջ ծավալը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված (միացված) լինելու դեպքում, երբ սահմանված կարգով տեղադրված է գազաչափ՝ [12.2] սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում գազաչափով հաշվառված ածխաթթու գազի ծավալը, իսկ գազաչափ տեղադրված չլինելու դեպքում՝ հաշվետու եռամսյակում տվյալ հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված հանքային ջրի ամբողջ ծավալը (անկախ հորատանցքը (աղբյուրը) շահագործելու նպատակներից).

[12.3] սյունակում լրացվում են չափաքանակները՝ ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան կնքված ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված արդյունահանման ծավալները, հաշվարկված հաշվետու եռամսյակի համար: Ընդերքօգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում՝ պայմանագրում արդյունահանման ենթակա ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [12.3] սյունակում լրացվում է «0».

[12.4] սյունակում լրացվում են [12.2] սյունակում նշված ծավալների՝ [12.3] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [12.4] սյունակում լրացվում է «0».

[12.5] սյունակում լրացվում են [12.3] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([12.2] և [12.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [12.5] սյունակում լրացվում է «0».

[12.6] սյունակում լրացվում են Դրույքաչափերի II բաժնով սահմանված համապատասխան դրույքաչափերը: Առաջնային ջրահաշվիչ և առանձնացված ջրահաշվիչներ տեղադրված լինելու դեպքում [12.6] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով հանքային ջրի շահագործման համապատասխան նպատակի համար սահմանված դրույքաչափը: Միայն մեկ նպատակով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս առաջնային ջրահաշվիչ տեղադրված չլինելու դեպքում [12.6] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով հանքային ջրի շահագործման տվյալ նպատակի համար սահմանված դրույքաչափը: Միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս որևէ առանձնացված ջրահաշվիչ տեղադրված չլինելու դեպքում [12.6] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով հանքային ջրի արդյունահանման համար սահմանված՝ տվյալ հորատանցքի (աղբյուրի) փաստացի շահագործման տեսակներից ամենաբարձր դրույքաչափը: Գազաչափ տեղադրված լինելու դեպքում [12.6] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով ածխաթթու գազ ստանալու նպատակով տվյալ հանքավայրի համար սահմանված համապատասխան դրույքաչափը, իսկ գազաչափ տեղադրված չլինելու դեպքում՝ Դրույքաչափերի II բաժնով ածխաթթու գազ ստանալու նպատակով հանքային ջրի արդյունահանման համար սահմանված դրույքաչափը:

[12.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([12.4] սյունակի) համար հաշվարկված վճարի գումարները ([12.4] X [12.6]).

[12.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([12.5] սյունակի) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([12.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([12.5] X [12.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն),

[12.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում արդյունահանված հանքային ջրի ամբողջ փաստացի ծավալների ([12.2] սյունակի) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([12.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([12.2] X [12.6] X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ).

[12.10] սյունակի տողերում լրացվում են [12.7], [12.8] և [12.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, [12.11] «Ընդամենը» տողերում լրացվում են [12.7], [12.8], [12.9] և [12.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՊԻՆԴ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԻ) ՄԱՐՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [13] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու եռամսյակում մարված պինդ օգտակար հանածոների տեսակներն ըստ օգտագործման նպատակների | Համապատասխան չափման միավորը | Հաշվետու եռամսյակում պինդ օգտակար հանածոների փաստացի մարված պաշարների ամբողջ ծավալները | Չափաքանակները գերազանցող մարված օգտակար հանածոների փաստացի ծավալները | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը (%) | Բնօգտագործման վճարի հաստատագրված դրույքաչափերը | Հաշվարկված բնօգտագործման վճարը | | | |
| | | | | | | Չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցելու համար | Ջրոյական չափաքանակների դեպքում | Ընդամենը |
| [13.1] | [13.2] | [13.3] | [13.4] | [13.5] | [13.6] | [13.7] | [13.8] | [13.9] | [13.10] |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | [13.11] | | | | | | | |

21. Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [13] բաժնում լրացվում են՝

[13.1] սյունակում լրացվում են Դրույքաչափերի II բաժնով սահմանված ոչ մետաղական պինդ (բացառությամբ աղի) օգտակար հանածոների (այսուհետ՝ հանածո) հաշվետու եռամսյակում փաստացի մարված տեսակները ըստ տրամադրված (համապատասխան) թույլատվությունների, դրանք առանձնացնելով ըստ [13.5] և [13.6] սյունակներում կիրառվող դրույքաչափերի.

[13.2] սյունակում լրացվում են հանածոների համար սահմանված համապատասխան չափման միավորները (կգ, տոննա, մ3),

[13.3] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում հանածոյի փաստացի մարված պաշարների ամբողջ ծավալները: Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործողի և լիազոր մարմնի միջև կնքված ընդերքօգտագործման պայմանագրի առկայության դեպքում [13.3] սյունակում լրացվում է միայն չափաքանակի (ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված օգտակար հանածոների մարման ընդհանուր ծավալների շրջանակներում) սահմաններում հանածոյի պաշարների մարված ծավալը.

[13.4] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող՝ հաշվետու եռամսյակում մարված պաշարների փաստացի ծավալները այն եռամսյակից սկսած, երբ գերազանցվել են ընդերքօգտագործման պայմանագրերով տվյալ հանածոյի մարման ընդհանուր պայմանագրային ծավալները: Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում՝ պայմանագրում մարման ենթակա ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [13.4] սյունակում լրացվում է «0».

[13.5] սյունակում լրացվում են վճարի հաշվարկման համար Դրույքաչափերի II բաժնի համապատասխան դրույքաչափերը, եթե հաշվետու եռամսյակում հանածոյի իրացման փաստացի գնի (առանց ԱԱՀ) և Դրույքաչափերի II բաժնով տվյալ հանածոյի մարված պաշարների համար սահմանված վճարի դրույքաչափի (այսուհետ՝ դրույքաչափ) արտադրյալը գերազանցում է Դրույքաչափերի IV բաժնով տվյալ հանածոյի մարված պաշարների համար սահմանված վճարի հաստատագրված դրույքաչափը (այսուհետ՝ հաստատագրված դրույքաչափ): [13.5] սյունակի տողում դրույքաչափ լրացված լինելու դեպքում [13.6] սյունակի համապատասխան տողում լրացում չի կատարվում: Ընդ որում, Դրույքաչափերով սահմանված այն գունավոր քարերի տեսակների մասով, որոնց համար վճարը հաշվարկվում է հիմք ընդունելով ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից հաշվետու եռամսյակի համար սահմանված տվյալ քարի միջազգային շուկայական միջին գինը (արտարժույթով), դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության դրամով հաշվարկելիս որպես փոխարժեք կիրառվում է հաշվետու եռամսյակին նախորդող ամսվա 20-րդ օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը: Դրույքաչափերի II բաժնով տվյալ քարի տեսակի համար սահմանված համապատասխան դրույքաչափերը լրացվում են միայն [13.5] սյունակում.

[13.6] սյունակում լրացվում են վճարի հաշվարկման համար Դրույքաչափերի IV բաժնով սահմանված համապատասխան հաստատագրված դրույքաչափերը, եթե հաշվետու եռամսյակում տվյալ հանածոյի իրացման փաստացի գնի (առանց ԱԱՀ) և դրույքաչափի արտադրյալը չի գերազանցում հաստատագրված դրույքաչափը կամ մարված պաշարների իրացում չի կատարվել (հաշվետու եռամսյակում մարված պաշարներից հաշվետու եռամսյակում չիրացված պաշարների մասով) կամ իրացվել է ոչ թե օգտակար հանածոն, այլ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչներին համապատասխան հանքագործական գործունեությունից տարբերվող գործունեության արդյունքում ստացված արտադրանքը կամ հանա-

ծոն օգտագործվել է արդյունահանողի ներտնտեսական կարիքների համար: [13.6] սյունակի տողում դրույքաչափ լրացված լինելու դեպքում [13.5] սյունակի համապատասխան տողում լրացում չի կատարվում: Եթե հաստատագրված դրույքաչափերը սահմանված են ըստ օգտակար հանածոյի պաշարների օգտակար ելքի չափերի, դրանք կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով նախատեսված օգտակար ելքի չափերին համապատասխանող մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ (որոնք պետք է լրացվեն [13.3] սյունակում): Ընդ որում, տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչներին համապատասխան հանքագործական գործունեությունից տարբերվող գործունեության արդյունքում ստացված արտադրանքին համապատասխանող մարված պաշարների ծավալների համար կիրառվում է Դրույքաչափերի IV բաժնով նախատեսված համապատասխան ամենաբարձր հաստատագրված դրույքաչափը, իսկ հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով լցանյութերի և բալաստային հումքի ելք նախատեսված չլինելու դեպքում դրանց համապատասխանող մարված պաշարների ծավալների նկատմամբ կիրառվում է շինաքարի կամ երեսապատման քարի օգտակար ելքի չափին համապատասխան հաստատված հաստատագրված դրույքաչափը.

[13.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([13.3] սյունակի) համար հաշվարկված վճարի գումարները (դրույքաչափերի կիրառման դեպքում [13.3] X հանածոյի իրացման փաստացի գին (առանց ԱԱՀ) և X [13.5], իսկ հաստատագրված դրույքաչափերի կիրառման դեպքում՝ [13.3] X [13.6]).

[13.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([13.4] սյունակի) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([13.5] և [13.6] սյունակների նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված վճարի գումարները (դրույքաչափերի կիրառման դեպքում՝ [13.4] X հանածոյի իրացման փաստացի գին (առանց ԱԱՀ) X [13.5] X համապատասխան բազմապատիկ մեծություն, իսկ հաստատագրված դրույքաչափերի կիրառման դեպքում՝ [13.4] X [13.6] X համապատասխան բազմապատիկ մեծություն).

[13.9] սյունակում լրացվում են գրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում փաստացի մարված ամբողջ ծավալների ([13.3] սյունակի) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([13.5] և [13.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված վճարի գումարները (դրույքաչափերի կիրառման դեպքում՝ [13.3] X հանածոյի իրացման փաստացի գին (առանց ԱԱՀ) X [13.5] X համապատասխան բազմապատիկ մեծություն, իսկ հաստատագրված դրույքաչափերի կիրառման դեպքում՝ [13.3] X [13.6] X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ).

[13.10] սյունակի տողերում լրացվում են [13.7], [13.8] և [13.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [13.11] «Ընդամենը» տողերում լրացվում են [13.7], [13.8], [13.9] և [13.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

**22**. Հաշվարկ-հաշվետվության հավելվածի [5]-ից [13]-րդ բաժիններում՝

1) նույն հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև չափաքանակների (սահմանափակումների) սահմանումը (թույլտվությունների տրամադրումը) և դրանից հետո մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանի ավարտը բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալները արտացոլվում են առանձին տողերով,

2) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սահմանված (տրամադրված) չափաքանակները (սահմանափակումները) կիրառվում ու արտացոլվում են այդ հաշվետու ժամանակաշրջանի՝ չափաքանակների (սահմանափակումների) սահմանմանը (թույլտվությունների տրամադրմանը) հաջորդող ժամանակահատվածի կտրվածքով՝ դրա սահմանումից (տրամադրումից) մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտն ընկած օրացուցային օրերին համապատասխան:

Պաշտոնատար անձ
(ֆիզիկական անձ) ____________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

»: